



**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳԼՏԱՏԱՆԱՅ
ԱՌ ՎԱՍՏԱԿԵԱՆ ՍՊԱՍԱԲՈՐՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԵՐ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ԶԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՈՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԵՄՇՆԻ
ԳԵՐԱՇՆՈՐՆ Տ. ՏԱԹԵՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՂԱՐԻՊԵԱՆ
ՈՐ Ի ՄԱՆ ՓԱՌԻՕ, ԲՐԱԶԻԼԻԱ**

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ջերմօրէն ողջունում եւ հայրապետական Մեր օրհնութիւնն ենք յղում Քրիստոսի հաւաքարիմ զինաւորիդ եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու բարեջան սպասաւորիդ՝ քահանայագործութեան Ձեր յիսնամեայ յոբելանի առիթով:

Սիրելի Սրբազան,

Շուրջ հինգ տասնամեակ, որպէս հոգեւոր սպասաւոր Քրիստոսասէր մեր ժողովրդի, Ձեր կարողութիւններն ի սպաս էք դնում յանուն մեր Սուրբ Եկեղեցու Աստուածշնորհ առաքելութեան արդիւնատրման: Այսօր ուրախ ենք արձանագրելու, որ նախնեաց սուրբ հաւաքքն ու աւերարանական ճշմարտութիւնները քարոզելու աստուածահաճոյ գործին ծառայել էք հաւաքարմօրէն, ջերմեռանդութեամբ եւ ամենայն նուիրումութեամբ:

Գնահատարժան է հոգեւոր ծառայութեան Ձեր ուղին: Ավարտելով Երուսաղեմի Սրբոց հակոբեանց վարժարանի ուսումնարանական շրջանը եւ քահանայական ձեռնադրութիւն ստանալով Ամենապարի Տ. Եղիշէ արքեպիսկոպոս Տէրպէրեան Պատրիարքի կողմից, ծառայութեան անցաք Ժառանգատրաց վարժարանում որպէս փոխընտր՝ անձնուէր ջանքեր բերելով յօգուր հոգեւորականաց երիտասարդ սերունդի պատրաստութեան պատասխանատու գործի: Ապա 1966 թուականից սկսեալ շուրջ մէկ եւ կէս տասնամեակ սպասաւորութիւն իրականացնելով 'Կորդոբայում' անխռնջ քարոզչութեամբ ու անձնոյի ծառայութեամբ զօրացեալ պահեցիք մեր ժողովրդի զաւակաց հաւաքը, եկեղեցասէր ու ազգասէր ոգին՝ առաջնորդելով առ Բարձրեալն Աստուած: Դուք երջանկայիշարակ Վազգէն Ա. Ամենայն հայոց հայրապետի ձեռամբ

արժանացաք եպիսկոպոսական ձեռնադրության և Սուրբ Օծման, արդեն իսկ կարգում լինելով իբրև առաջնորդ Բրազիլիայի Նայոց թեմի, որպես Ձեր քաջալերանքով ու նախաձեռնությամբ իրագործուեցին բազում եկեղեցաշէն ու ազգանուէր ծրագրեր՝ կենդանի ու գորավոր պահելով հայորդեաց ազգային և եկեղեցական կեանքը, որի ականապեսն ենք եղել նաև Մենք՝ յոնթացս Նաբաւային Ամերիկա կապարած Նովսապերական Մեր այցելությունների:

Միևեկի Սրբազան, Ձեր կեանքի յոբելեանական այս հանգրուանին Մեր սէրն ու բարձր գնահատանքն ենք բերում Ձեզ մեր Եկեղեցու ու ժողովրդի կեանքում Ձեր բազմաթիւն վաստակի համար և Նայրապերական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

Ս Ո Ւ Բ Բ Ն Ե Բ Ս Է Ս Շ Ն Ո Ր Ն Ա Լ Ի

պարտոյ բարձր շքանշանը:

Ի խորոց սրբի մաղթում ենք Ձեզ քաջառողջ և արեւշապ կենաց օրեր, որպէսզի Տիրոջ Սուրբ Աջի հովանու ներքոյ շարունակէք Ձեր առաքելությունը՝ նորանոր եկեղեցաշէն ու ազգօգուր յաջողություններ արձանագրելով Ձեր ծառայության մէջ:

Թող Ամենակալ Տէրն անսասան պահի Նայասրանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին և Ամենայն Նայոց Աստուածակառոյց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը:

Օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 21-ն Օգոստոսի
յամի Տեառն 2013 և ի թուին հայոց ՌՆԱԲ.
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի
րնդ համարաւ 732